ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 ապրիլի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

51
(2717)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՆԻՊՈՒԼԱՑՆՈՒՄ ԵՆ ՔԵԿՈՒՅՑԸ

ՀՀ արդարադատության նախարարն ապրիլի 5-ին հայտարարություն էր տարածել եւ հպարտորեն հայտարարել, թե Հայաստանը կարողացել է «դուրս գալ ԳՐԵԿՈ-ի գնահատման անհամապատասխանության գործընթացից՝ այլեւս չհամարվելով «համընդհանուր անբավարար» կատարողական ունեցող երկիր, որպիսին համարվում էր 2015-2019թթ. գնահատումների արդյունքներով»: Խոսքը Եվրոպայի խորհրդի կողմից պաշտոնապես հրապարակված ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ)՝ ՀՀ դատավորների, դատախազների, պատգամավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելման գնահատման միջանկյալ զեկույցի մասին է: Բնականաբար, այս ամենից կարող էր տպավորություն լինել, թե, իբր, նախկիններն անբավարար էին աշխատում, իսկ այժմ առաջընթաց կա, սակայն, ինչպես հաճախ է պատահում, ամեն ինչ այնքան էլ այդպես չէ: Օրինակ՝ 2016 թ. փետրվարի 25-ից մինչեւ 2017 թ. հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ընդհանուր 18 հանձնարարականից 5-ը ԳՐԵԿՈ-ն գնահատել էր բավարար կամ բավարար կերպով, 12 հանձնարարական՝ մասամբ իրականացված, եւ միայն մեկը՝ չկատարված: Ընդհանուր առմամբ, տարբեր տարիների զեկույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ 2019 թվականին GRECO-ի զեկույցրով առաջին անգամ կոռուպցիայի դեմ պայքարի ցուցանիշներով Հայաստանը դասվել էր «ընդհանուր անբավարար» երկրների շարքում, ինչը չէր եղել, օրինակ, նույն նախկինների՝ Սերժ Սարգսյանի կառավարման տարիներին: Այսինքն՝ հերթական անգամ իշխանությունների խոսքերն ու իրականությունը իրար չեն համապատասխանում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավորները կուսակցության վարչության վերջին նիստից հետո մտափոխվել են Ալեն Սիմոնյանի մասով: Կասկադում ԱԺ նախագահի մասնակցությամբ տեղի ունեցած աղմկահարույց միջադեպից հետո իշխող ֆրակցիայի պատգամավորները, ոմանք՝ներքին զրույցներում, իսկ ոմանք էլ անթաքույց լրատվամիջոցների հետ զրույցում հայտարարում էին, որ ֆրակցիան պետք է քննարկի նրա մասնակցությամբ միջադեպը: Պատգամավորներից մի քանիսն էլ, հավանաբար առաջին նախագահի առաջարկից ոգեւորված, հայտարարում էին, որ ֆրակցիան ԱԺ նախագահի պաշտոնանկության հարց պետք է քննարկի: Բայց, արի ու տես, ՔՊ վարչության վերջին նիստից հետո իշխող ֆրակցիայի ներսում տրամադրություններ են փոխվել: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նիստին ո՛չ Ալեն Սիմոնյանի մասնակցությամբ միջադեպը, ո՛չ էլ նրա պաշտոնանկության հարց չի քննարկվել: Թե որն է ՔՊ-ականների մտափոխության պատճառը, հասկանալի չէ: Հավանաբար, Ալեն Սիմոնյանին, չնայած ՔՊ մի թեւի ջանքերին, հաջողվել է պատգամավորների հետ լեզու գտնել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանը, անդրադառնալով այս հարցին, ասաց, որ ո՛չ Ալեն Սիմոնյանի մասնակցությամբ միջադեպը, ո՛չ էլ նրա պաշտոնանկության հարց, առհասարակ, ֆրակցիան չի քննարկել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի եւ Տիգրանյան փողոցում կարտոֆիլ վաճառող Արթուր Հակոբյանի միջեւ տեղի ունեցած միջադեպի գործը քննիչները մի կողմ են դրել եւ ավելի կարեւոր գործերով են զբաղված: Այսինքն՝ իշխանական պատգամավորի մասնակցությամբ տեղի ունեցած խուլիգանական արարքը չի քննվում: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս գործը կկարճվի, քանի որ այդպես է ցույց տալիս ընթացքը: Բանն այն է, որ կարտոֆիլ վաճառող Արթուր Հակոբյանը միջադեպից հետո որպես կասկածյալ ձերբակալվել էր ու կարճ ժամանակ անց ազատ արձակվել: Իրավապահները լսել էին նաեւ պատգամավոր Աղազարյանին, ու մինչ օրս գործով այլ քննչական գործողություններ չեն կատարվել, քրեական գործով չկա մեղադրյալ, Արթուր Հակոբյանի նկատմամբ էլ քրեական հետապնդում չի իրականացվել: Դատելով իրավիճակից՝ իրավապահները հասարակական բուռն արձագանքից հասկացան, որ ՔՊ-ական պատգամավոր Աղազարյանը, մեղմ ասած, սարքել էր վաճառական քաղաքացու գլխին, եւ այլընտրանք չունեն, քան քրեական գործը կարճելը: Հիշեցնենք, որ պատգամավորը մարտի 3-ին աշխատանքի գնալու ճանապարհին՝ Տիգրանյան հասցեում, կարտոֆիլի վաճառքով զբաղվող Հակոբյանի հետ վեճ էր ունեցել, ոտքով հարվածել առեւտրականի կարտոֆիլի պարկերին ու երկու պարկ թափել փողոցում: Միջադեպի պատճառը «կարտոֆիլների փողոց» անունով հայտնի փողոցում կարտոֆիլ վաճառելն է եղել, որը դուր չէր եկել Աղազարյանին:

Ընդդիմադիր եւ իշխանական պատգամավորների միջեւ միջադեպի պատճառ դարձած Հռոմի կանոնադրության շուրջ կրքերը չեն հանդարտվում: Ինչպես հայտնի է, մարտի 24-ին ՀՀ Սահմանադրական դատարանը հայտարարեց, որ Միջազգային քրեական դատարանի հիմք հանդիսացող Հռոմի ստատուտը համապատասխանում է երկրի Սահմանադրությանը, եւ Հայաստանի կառավարությունը կարող է շարունակել համաձայնագրի վավերացման գործընթացը: Այս հանգամանքից հետո տարաբնույթ հայտարարություններ հնչեցին նաեւ այն մասին, թե այս քայլով Հայաստանը նաեւ դեմ է գնում ՌԴ-ին, եւ Արեւմուտքի պատվերով Վլադիմիր Պուտինը կձերբակալվի, հենց Երեւան մտնի: Սակայն ՍԴ-ի որոշումով կոնվենցիան ամենեւին էլ չի համարում վավերացված եւ չի կարող գործել: Իսկ ի՞նչ է սպասվում. բանն այն է, որ, ըստ ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի, Ազգային ժողովն է վավերացնում միջազգային պայմանագրերը, այսինքն՝ առանց խորհրդարանի հաստատման Հռոմի ստատուտը չի կարող ուժի մեջ մտնել: Հստակ ժամկետներ կան այն ԱԺ ուղարկելու մասով. ՍԴ որոշումից հետո Հայաստանի կառավարությունն ունի երեք ամիս՝ ստատուտի վավերացման հարցը խորհրդարան ուղարկելու համար: Մեր տեղեկություններով՝ այս պահի դրությամբ իշխանությունները դեռեւս վերջնական որոշում չունեն կոնվենցիայի մասով, համենայնդեպս, գործադիրը դեռ օրենսդիր մարմին չի ուղարկել ստատուտը:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԸՍՏ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԵՏՆԱՀԱՆՔ ՉԿԱ

«Ժողովրդի իշխանության կամ ժողովրդավարության տեսանկյունից որեւէ հետնահանք չկա»,- Արցախի ՄԻՊ-ը՝ Սահմանադրական բարեփոխումների նախագծի մասին: Ինչպես արդեն հայտնել ենք, դեռեւս փետրվարից Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը Սահմանադրության փոփոխության գործընթաց է սկսել, ըստ որի՝ ֆորսմաժորային իրավիճակներում հանրաքվեության նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում նախագահի ընտրության իրավունքը վերադարձվում է խորհրդարանին: Նախագիծը ԱԺ-ում առաջին ընթերցմամբ քննարկվելուց հետո ուղարկվել է Գերագույն դատարան, դատարանի համաձայնությունը ստանալուց հետո այն կրկին կվերադառնա ԱԺ՝ արդեն վերջնական քննարկման:

Սահմանադրական բարեփոխումների այս նախագծի հետ կապված՝տարբեր տեսակետներ են հնչում. արցախցիների մի մասը դրական է գնահատում ԱԺ նախագահի այս նախաձեռնությունը, իսկ մի մասն էլ այն կարծիքին է, որ շրջափակման եւ անվտանգային լրջագույն խնդիրների պայմաններում Սահմանադրական բարեփոխումների ժամանակը չէ:

Հիշեցնենք, որ նախորդ տարի եւս Արցախի նախագահը Սահմանադրական փոփոխությունների առաջարկով էր հանդես եկել, համաձայն որի՝ ԱՀ Սահմանադրությունը եւ ԱՀ սահմանների իրավազորությանը վերաբերվող 175-րդ հոդվածը կարող են փոփոխվել միայն հանրաքվեով՝ անփոփոխ թողնելով Սահմանադրություն ընդունելու, փոփոխություններ առաջարկելու իրավունք ունեցողների շրջանակը, սակայն նախագահը հետ էր կանչել իր իսկ առաջարկած նախագիծը: «Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի հետ:

-Պարոն Ստեփանյան, ի՞նչ կարծիք ունեք ԱՀ նախագահի նախաձեռնած Սահմանադրական բարեփոխումների նոր նախագծի մասին, որեւէ կերպ այն առնչվո՞ւմ է մարդու իրավունքների հետ:

-Շրջափակմամբ եւ ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ ՄԻՊ գրասենյակը կարծիք դեռ չի հայտնել: Նախագիծը Գերագույն դատարանում է. մինչեւ դատարանի որոշումը չլինի, մենք որեւէ ձեւով դիրքորոշում չենք արտահայտելու: Իհարկե, որոշ մարդկանց մոտ կարող է ողջամիտ կասկած առաջանալ, որ մենք որեւէ ձեւով արդարադատության նկատմամբ միջամտություն ենք իրականացնում, դրա համար նախորդ անգամ էլ ՄԻՊ-ը սպասեց, մինչեւ պրոցեսը Գերագույն դատարանում ավարտվեց, ուղարկվեց ԱԺ, եւ մինչեւ ԱԺ-ի կողմից վերջնական ընդունվելն արդեն ՄԻՊ դիրքորոշումը հրապարակվեց: Այսինքն՝ այս առումով մենք շատ զգուշավոր ենք աշխատում, որպեսզի որեւէ դեպքում չդիտարկվի որպես միջամտություն կամ ուղղորդում:

-Նախորդ նախագծի դեպքում Դուք բացասական եզրակացություն էիք ներկայացրել. ինչո՞վ է այս նախագիծը տարբերվում նախորդից:

-Նախնական կարող եմ ասել, որ այս նախագիծը նախորդից տարբերվում է նրանով, որ նախորդի դեպքում Սահմանադրության անգամ այն հոդվածները, որոնք հանրաքվեի միջոցով փոփոխության պետք է ենթարկվեին, ԱԺ-ն կկարողանար փոփոխել: Այն ժամանակ մեր արտահայտած դիրքորոշումը կայանում էր նրանում, որ դրանում էինք տեսնում վտանգը, որ ժողովրդից, փաստորեն, վերցվում էր երկրի մայր օրենքը փոխելու այդ կարեւոր լծակը եւ հնարավորությունը, իսկ առաջարկված այս տարբերակում նման բան չկա: Այս տարբերակը ինքնին ենթադրում է, որ միայն ռազմական դրության պայմաններում ժամանակավոր նախագահ ընտրելու հնարավորություն է ընձեռվում ԱԺ-ին: Մենք այս նախագծի մասով էլ մեր դիրքորոշումը կարտահայտենք, բայց, իհարկե, այս անգամ չի լինելու այնպես, ինչպես նախորդի դեպքում, որովհետեւ այստեղ կոնկրետ ժողովրդի իշխանության կամ ժողովրդավարության տեսանկյունից որեւէ հետնահանք չկա: Մենք պետք է հասկանանք, թե որքանով է մարդու իրավունքներին առնչվում այս նախագիծը. սա հասկանալուց հետո մեր դիրքորոշումը կհայտնենք: Նախորդ նախագիծը հստակ էր, որ կոնկրետ առնչվում է մարդու իրավունքներին. օրինակ՝ նախորդ առաջարկով Սահմանադրության երկրորդ գլուխը, որն ամբողջությամբ առնչվում է մարդու իրավունքներին, ուղղակի հնարավոր էր փոփոխել ԱԺ պատգամավորների կողմից՝ առանց հանրաքվեի, եւ սա մեզ համար մտահոգիչ էր, որ իրավունքների բաժինը պետք է վերապահել ժողովրդին, այսինքն՝ ժողովուրդը պետք է որոշի իր իրավունքները, ոչ թե ԱԺ-ն: Այս առաջարկի դեպքում մենք պետք է գնահատենք՝ որքանով է այն մարդու իրավունքների համար հետեւանքներ առաջացնում: Եթե գնահատականը լինի, որ մարդու իրավունքների վրա կարող է վատթարացնող կամ այլ ազդեցություն ունենալ, դրանից հետո նոր միայն կարծիք կհրապարակենք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՇՎԵԴԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Օրերս խորհրդարանում հանդիպեցինք Շվեդիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Բյորն Սյոդերի գլխավորած պատվիրակության անդամների հետ»,- հայտնել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

Գործընկերներիս ներկայացրի շրջափակված Արցախում տիրող իրավիճակը: Ընդգծեցի Արցախ միջազգային դիտորդներ ուղարկելու անհրաժեշտությունը, որպեսզի արձանագրեն, թե ինչպես են ադրբեջանցիները յուրաքանչյուր օր ոտնահարում Արցախի խաղաղ բնակչության կյանքի եւ մյուս հիմնարար իրավունքները:

Քննարկման ընթացքում ահազանգեցի, որ Ադրբեջանը Արցախի հայաթափման հանցավոր նպատակ է հետապնդում, իսկ 115 օրվա շրջափակման պայմաններում արցախահայությունը պայքարում է ողջ մնալու համար:

Շեշտադրեցի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հրատապ անհրաժեշտությունը՝ ակնկալելով Շվեդիայի աջակցությունն այս հարցում:

ԴԱՏԱԽԱԶԸ ԿԳԱ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը կմտնի խորհրդարան «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանի հետեւից: Նրա նկատմամբ պետք է քրեական վարույթ հարուցվի: Այս պահին իրավապահները հետեւում են քննության ընթացքին, որպեսզի վերջնական որոշում կայացնեն, թե Աննա Վարդապետյանը կոնկրետ ինչ պահանջով մտնի խորհրդարան՝ միայն անձեռնմխելիությունից զրկելու, թե նաեւ կալանքի միջնորդությամբ: Ասել է թե՝ Միեր Սահակյանի կալանքի հարցը դեռ երեկվա դրությամբ որոշված չէր, իսկ թե ինչ կլինի այսօր կամ վաղը, կհետեւենք զարգացումներին:

Իսկ հիմա այն մասին, թե ինչ հարցեր էին երեկ տալիս քննիչները ԱԺ պատգամավորներին. որտե՞ղ էիք դուք նստած, ինչի՞ց սկսվեց վեճը, Միեր Սահակյանի ձեռքին ինչ-որ իր տեսե՞լ եք, որով նա հարվածել է Վլադիմիր Վարդանյանին, թե՞ ոչ, որտե՞ղ ընկավ Վլադիմիր Վարդանյանը, եւ այսպես շարունակ: Նկատենք, որ ՔՊ պատգամավորներից որեւէ մեկը հստակ չի ասել, որ Միեր Սահակյանի ձեռքին որեւէ իր է եղել, որով նա հարվածել է Վարդանյանին:

Քննիչները հետաքրքրվում են պատգամավորի ձեռքում եղած ինչ-որ առարկայի մասին, քանի որ Վլադիմիր Վարդանյանն է իր հաղորդման մեջ հստակ նշել, որ Միեր Սահակյանը աջ ձեռքում գտնվող ինչ-որ առարկայով հարվածել է իր ձախ հոնքին: Միեր Սահակյանը պնդում է, որ բռունցքով է հարվածել:

ՆՈՐ ՀԱՎԱՔՆԵՐ

Կառավարության այսօրվա նիստում հաստատվեց վարժական հավաքներ անցկացնելու նախագիծը, ըստ որի՝ նախատեսվում է 2023թ. մայիսի 1-ից մինչեւ հուլիսի 7-ը անցկացնել պահեստազորայինների վարժական հավաքներ: Կառավարության նիստում հաստատվեց ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից տրանսպորտային միջոցների ներգրավման կարգը, սահմանվում են վարժական հավաքների անցկացման նպատակները, ներգրավվող պահեստազորայինների կազմերը, քանակները, ներգրավման ժամկետները, ներգրավվող տրանսպորտային միջոցների տեսակները, քանակները եւ ներգրավման ժամկետները: Վարժական հավաքներին կներգրավվի մինչեւ 2715 քաղաքացի, որոնցից 2431-ը՝ շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի, 124-ը՝ավագ ենթասպայական կազմի, 160-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ՝համազորային (մոտոհրաձգային, կապի, հետախուզական, ինժեներական), հրթիռահրետանային մասնագիտություններով:

Վարժական հավաքների ապահովման համար, 2023 թվականի մայիսի 1-ից մինչեւ հուլիսի 7-ը ներառյալ, ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից կներգրավվեն մինչեւ 278 միավոր տրանսպորտային միջոց՝ յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի ներգրավումը ոչ ավելի, քան 7 օրացույցային օր ժամկետով, բացառությամբ ճանապարհաշինարարական տրանսպորտային միջոցների, որոնց ներգրավումը՝ ոչ ավելի, քան 25 օրացուցային օր ժամկետով:

440 ՄԼՆ՝ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՆ

Ավելի քան 440 մլն դրամ հատկացվեց Սյունիքի մարզում 40 կրթահամալիրի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքները սկսելու համար: ArmLur.am-ը տեղեկացավ, որ, ընդհանուր առմամբ, նախատեսվում է Սյունիքի մարզում ստեղծել թվով 40 կրթահամալիր, որոնցից 7-ը՝ Կապանում, 33-ը՝Սյունիքի մարզի մյուս 7 խոշորացված համայնքում:

Որոշման նախագծով նախատեսվում է, որ այս նպատակով կբվերաբաշխվի 440 մլն 290 հազար դրամի չափով գումար, որը կուղղվի կրթահամալիրների ստեղծման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի տեղակապմանը եւ փորձաքննությանը: Ընդհանուր առմամբ, կառուցվելու է 36 կրթահամալիր, 3 մոդուլային դպրոց, որոնց կառուցումը սկսվել էր ավելի վաղ: Տեղի թիվ մեկ դպրոցը, որի շենքային պայմանները լավ վիճակում են, վերափոխվելու է կրթահամալիրի:

ԽՈՒԼԻԳԱՆԱԿԱՆ ՊԱՀՎԱԾՔ

ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՆԱԽԱԽՏՈՒՄ՝ ՄԵԿ ՕՐՈՒՄ

Ապրիլի 4-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում, երբ պետք է ընտրվեր իշխանական ՔՊ կամ ընդդիմադիր երկու՝ «Պատիվ ունեմ» եւ «Հայաստան» խմբակցությունների կողմից ներկայացված օմբուդսմենի թեկնածուներից մեկը, տեղի են ունեցել մի շարք հանցագործություններ:

Ցանկանում ենք տեղեկացնել, որ նախ խախտվել են «ՀՀ ԱԺ պատգամավորի գործունեության եւ երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված Պատգամավորական էթիկայի կանոնները, այն է՝

- հարգել հանրության բարոյական նորմերը,
- պահպանել Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների նիստերի եւ խորհրդարանական լսումների անցկացման կարգը,
- իր գործունեությամբ նպաստել Ազգային ժողովի նկատմամբ վստահության եւ հարգանքի ձեւավորմանը,
- ամենուր եւ ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսեւորել պատգամավորին վայել վարքագիծ,
- հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, լրագրողների, ինչպես նաեւ բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները, հատկապես՝ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, խախտել են «ՀՀ ԱԺ պատգամավորի գործունեության եւ երաշխիքների մասին» ՀՀ օրենքը:

Նրանք անարգել են հանրության բարոյական նորմերը, չեն պահպանել ԱԺ հանձնաժողովի նիստի անցկացման կարգը, պատգամավորին վայել վարքագիծ չեն դրսեւորել, ՀԱՐԳԱԼԻՑ վերաբերմունք չեն ցուցաբերել իրենցից տարբերվող կարծիք ունեցողների, քննարկման մասնակիցների նկատմամբ:

Հիմա ամեն ինչի մասին՝փաստերով.

ԱԺ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը նիստի սկզբում սպառնաց, որ ընդդիմադիր խմբակցությունների կողմից ներկայացված ՄԻՊ թեկնածուն ռեալիկներ չանի, մինչդեռ բոլոր ներկա ՔՊ-ականները տեղից ռեալիկներ էին անում:

Ահա Նիկոլ Փաշինյանի կերտած ժողովրդավարությունը, խոսքի ազատության պահպանության դրսեւորումները եւ ՔՊ խմբակցության կողմից իրականացված սադրանքներն ու հանցանքները: Սրանք փաստեր են 4.5 ժամ տեւած ԱԺ հանձնաժողովի նիստից, եւ յուրաքանչյուրը կարող է դատել, թե ինչ օրինախախտումներ են թույլ տվել իշխանական խմբակցության պատգամավորները եւ քարտուղար Արթուր Հովհաննիսյանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՖՐԱՆՍԻԱՆ ԴԵՄ Է

Ֆրանսիան դեմ է միջուկային զենքի տարածմանն այն ունեցող երկրների սահմաններից դուրս եւ կարեւոր է համարում բացառել դրա կիրառման հնարավորությունը Ուկրաինայի ներկայիս հակամարտությունում: Այս մասին հինգշաբթի հայտարարել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը Պեկինում Չինաստանի նախագահ Սի Ծինփինի հետ հանդիպումից հետո կայացած մամուլի ասուլիսում:

«Ֆրանսիան համակարծիք է ՉԺՀ-ի հետ այն հարցում, որ միջուկային զենքը պետք է բացառվի այս հակամարտությունից: Սա նշանակում է, որ պետք է հետեւել այս ոլորտում առկա միջազգային պայմանագրերին: Նաեւ ոչ մի դեպքում միջուկային զենքը չպետք է տեղակայվի այն երկրներից դուրս, որոնք տիրապետում են դրան, հատկապես՝ Եվրոպայում»,- ասել է նա:

«ԿԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ»

142,5 հազար եվրո գումար կվճարվի «Կին քաղաքական առաջնորդներ» (Women Political Leaders-WPL) միջազգային ցանցին: Որոշման հիմնավորման մեջ նշվում է. «2023թ-ի հոկտեմբերի 19-ից 20-ը Երեւանում նախատեսվում է անցկացնել «Կանանց դերը ժողովրդավարության, խաղաղության եւ անվտանգության խթանման գործում» խորագրով գագաթնաժողովը: Որպես միջոցառման համակազմակերպիչներ հանդես են գալու Հայաստանը՝ի դեմս ՀՀ ԱԳՆ-ի, եւ «Կին քաղաքական առաջնորդներ» (Women Political Leaders-WPL) միջազգային ցանցը: ՀՀ-ում ներպետական համաձայնեցման փուլից հետո ՀՀ ԱԳՆ-ի եւ WPL միջեւ ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, որով Հայաստանը՝ որպես հյուրընկալող կողմ, կազմակերպությանը պետք է փոխանցի 190 հազար եվրո: Նշենք, որ Երեւանում անցկացվելիք միջոցառմանը նախատեսվում է 200-ից 250 բարձրաստիճան պաշտոնյաների, կին գործիչների մասնակցություն:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Ֆինլանդիայի վարչապետ, Սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահ Սաննա Մարինն երեկ հանրապետության նախագահ Սաուլի Նիինիստյոյին կառավարության հրաժարականի դիմում է ներկայացրել:

«Ես ընդունում եմ Ձեր հրաժարականի դիմումը եւ հուսով եմ, որ կառավարությունը կշարունակի կատարել պարտավորությունները այնքան ժամանակ, քանի դեռ նորը չի նշանակվել»,- Նիինիստյոյի խոսքը մեջբերել է Yle լրատվամիջոցը: Նշվում է, որ նախագահը շնորհակալություն է հայտնել Մարինին դժվար տարիներին համագործակցության համար:

Ընդդիմադիր Ազգային պահպանողական կուսակցության նախագահ Պետերի Օրպոն, որը հաղթանակ է տարել ապրիլի 2-ին կայացած խորհրդարանական ընտրություններում, հաջորդ շաբաթ կսկսի նոր կառավարություն կազմելու շուրջ նախնական բանակցությունները: Չորեքշաբթի օրը Մարինը հայտնել էր, որ ընտրություններում պարտվելուց հետո կթողնի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահի պաշտոնը եւ կշարունակի իր քաղաքական գործունեությունը որպես խորհրդարանի պատգամավոր: Կիրակի օրը կայացած ընտրություններում նրա կուսակցությունը քվեների քանակով զիջել է ընդդիմադիր Ազգային պահպանողական կուսակցությանը եւ «Իսկական ֆիններ» կուսակցությանը:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված քրեական վարույթի ընթացքում բացահայտվել են ՀՀ քրեակատարողական ծառայության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի օպերատիվ բաժնի պետի տեղակալ Ա. Ա.-ի կողմից նույն ՔԿՀ-ի կալանավորից եւ դատապարտյալից կաշառք ստանալու դեպքեր:

Նախաքննությամբ ապացույցներ են ձեռք բերվել այն մասին, որ Ա. Ա.-ն ՔԿՀ հիմնարկի դատապարտյալ Ա. Ս.-ի օգտին հովանավորչության եւ թողտվության, այն է՝ վերջինիս նկատմամբ բարեհաճ վերաբերմունք դրսեւորելու եւ խնդիրներ չստեղծելու, ինչպես նաեւ արգելված առարկա հանդիսացող բջջային հեռախոսը չառգրավելու համար դատապարտյալից պահանջել է 200.000 ՀՀ դրամ կաշառք: Դրանից հետո՝ 2022 թվականի մայիսի 30-ին, կաշառքի հիշյալ գումարը դատապարտյալ Ա. Ս.-ի կնոջ բանկային հաշվից փոխանցվել է ՔԿՀ պաշտոնյայի՝ Ա. Ա.-ի կնոջ անվամբ գրանցված, սակայն փաստացի Ա. Ա.-ի կողմից տնօրինվող բանկային հաշվին:

Բացի այդ, նույն պաշտոնատար անձը նշված քրեակատարողական հիմնարկի կալանավոր, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող, «օրենքով գող» Ա. Ղ.-ի օգտին նույնպես բարեհաճ վերաբերմունք դրսեւորելու, խնդիրներ չստեղծելու, ինչպես նաեւ բջջային հեռախոսը չառգրավելու համար հիշյալ կալանավորից պահանջել եւ վերջինիս հետ փոխկապակցված անձանց կողմից վճարային տերմինալներից տարբեր օրերին կատարված փոխանցումների միջոցով ստացել է ընդհանուր 448.600 ՀՀ դրամ կաշառք, որը կրկին փոխանցվել է պաշտոնատար անձի կնոջ բանկային հաշվեհամարին:

Այսպիսով, կատարված բանկային փոխանցումներով ՔԿՀ պաշտոնատար անձը երկու դեպքում ապօրինի գործողությունների համար կաշառք է ստացել:

Նախաքննության ընթացքում «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի դատապարտյալ Ա.Ս.-ին եւ կալանավոր Ա. Ղ.-ին մեղադրանք է ներկայացվել 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, իսկ հիշյալ ՔԿՀ-ի օպերատիվ բաժնի պետի տեղակալ Ա. Ա.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ):

Ա. Ա.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ Է ՀԱՓՇՏԱԿԵԼ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված քրեական վարույթով ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է, որ Մ. Հ.-ն, զբաղեցնելով ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ֆինչական բաժնի ավագ ֆինիչի պաշտոնը, ծառայողական լիազորություններն օգտագործելով, խաբեության եղանակով տուժողից հափշտակել է 204.000 ՀՀ դրամ:

Մասնավորապես՝ պարզվել է, որ քննիչ Ս. Հ.-ն քրեական վարույթով իրականացված նախաքննության ընթացքում՝ 2022 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին, իր աշխատասենյակում տվյալ վարույթով տուժող Մ. Բ.-ից շահադիտական նպատակով իբրեւ իրեղեն ապացույց պահանջել եւ ստացել է 204.000 ՀՀ դրամ՝ Մ. Բ.-ին կեղծ հավաստիացումներ տալով, թե, իբր, հիշյալ գումարն անհրաժեշտ է նախաքննության արդյունավետության եւ քրեական վարույթի օրինական ընթացքն ապահովվելու համար:

Արդյունքում Մ. Բ.-ն նույն օրը քննիչին առձեռն փոխանցել է 204.000 ՀՀ դրամ, որը վերջինս հափշտակել է: Վերը նշված հանցավոր արարքի կատարման համար քննիչ Ս. Հ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (Խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակություն կատարելու համար):

Նախաքննության ընթացքում Ս. Հ.-ն իրեն մեղավոր է ճանաչել եւ տվել խոստովանական ցուցմունքներ: 2022 թվականի հոկտեմբերի 12-ին Ս. Հ.-ի նկատմամբ կիրառվել է «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ, եւ վերջինս ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԿՐԱԿԵԼ Է ԿՆՈՋ ՎՐԱ

Ապրիլի 5-ին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնից ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին հաղորդում էր ստացվել, որ Գոգոլի փողոցի շենքերից մեկի մի բնակարանից ոտքի հրազենային վնասվածքով բուժօգնության է տեղափոխվել 32-ամյա մի կին:

Հիվանդանոց մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ ժամը 09:35-ին Նորաշխարյան փողոցի շենքերից մեկի մոտ՝ «Միցուբիշի» մեքենայի սրահում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ կնոջը օդաճնշիչ ատրճանակից կրակել, ապա ատրճանակի բռնակով հարվածներ էր հասցրել 34-ամյա ամուսինը, ինչից հետո մեքենայով դիմել էր փախուստի:

Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության, Մարտունու բաժնի եւ Գեղարքունիքի մարզի ՊԾ ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ 34-ամյա տղամարդը Լիճք գյուղում հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Մարտունու բաժին:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

Փաստի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԻ ԱՎԱՐՏ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 2022թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 20:15-ի սահմաններում, Երեւանի 49-ամյա բնակիչը, գտնվելով իր ծանոթի՝ Գավառ համայնքի Սայադյան փողոցում գտնվող բնակարանում, ծանոթացել է Երեւանի 32-ամյա բնակչի հետ, որը եւս հյուրընկալվել էր նույն բնակարանում: 49-ամյա տղամարդն իր ծանոթի հետ օղի է օգտագործել, որի ընթացքում 32-ամյա տղամարդը, գտնվելով նշված տան առաջին հարկի հյուրասենյակում, իր մոտ է կանչել 49-ամյա տղամարդուն: Նրանց միջեւ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանություն է առաջացել, որի ընթացքում վերջինս 32-ամյա տղամարդուն ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ սուր կտրող-ծակող գործիքով չորս հարված է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ:

Բացի այդ, 49-ամյա տղամարդն իր նախկին կնոջ նկատմամբ սպանության փորձ կատարելու համար ազատազրկման դատապարտվելուց եւ 2022թ. մայիսին պատժի կրումից ազատվելուց հետո 2022թ. մայիսի 24-ից 30-ն ընկած ժամանակահատվածում, պարբերաբար զանգահարել է կնոջը, սպառնացել նրան, որ կսպանի, որն առաջացրել է այդ սպառնալիքն իրական համարելու իրական վտանգ եւ վախ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Երեւանի 49-ամյա բնակչին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 194-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 5-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 72 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵՌԱԿՈՄՊԼԵԿՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Տասնյակներ շարունակվող արտագաղթի, նաեւ հանրապետության ներսում այլ բնակավայրեր տեղափոխվելու հետեւանքով Տավուշի մարզի փոքր եւ սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցներում քիչ թվով աշակերտներ են սովորում: Աշակերտների թվի սակավության հետեւանքով այդ բնակավայրերի դպրոցներում գործում են երկկոմպլեկտ դասարաններ, երբ տարբեր տարիքի երեխաները մեկ դասարանում են սովորում: Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկատվական հարցման՝ Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ Տավուշի մարզի հանրակրթական 75 դպրոցներից 25-ում՝ Խաչարձանի, Աղավնավանքի, Ենոքավանի, Հովքի, Բերքաբերի, Ներքին Ծաղկավանի, Լուսաձորի, Լուսահովտի, Աճարկուտի, Դիտավանի, Կիրանցի, Ակնաղբյուրի, Գոշի հիմնական, Իծաքարի, Չինչինի, Վարագավանի, Այգեպարի, Մովսեսի, Չորաթանի, Նորաշենի, Չինարիի, Դեղձավանի, Արճիսի, Ջուջեւանի, Բարեկամավանի դպրոցներում գործում են երկկոմպլեկտ դասարաններ, Բերքաբերում՝ միաժամանակ առկա է նաեւ եռակոմպլեկտ դասարան: Մոսվես գյուղի դպրոցը, ուր երկկոմպլեկտ դասարան է գործում, խորհրդային ժամանակ ունեցել է մոտ 1100 աշակերտ: Հիմա Մոսկվայի դպրոցներում դասարաններ կան, որտեղ աշակերտների մեծամասնությունը մովսեսցի ծնողների զավակներ են:

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՉԵՆ ԿՐՃԱՏՎԻ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարտի 21-ին որոշում է ընդունել դադարեցնել Տավուշի մարզպետարանի թվով 7 բաժինների՝ ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի, քաղաքաշինության վարչության տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժնի, գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի, քարտուղարության վարչատնտեսական բաժնի, ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, տեղական ինքնակառավարման եւ հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի, տեղական ինքնակառավարման եւ հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի գործունեությունը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ ուղարկել, թե մարզպետարանի 7 բաժինների գործունեության դադարեցման հետեւանքով քանի աշխատակից է կրճատվելու: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է, որ այդ 7 բաժինների գործունեությունը դադարեցվել է ՀՀ վարչապետի՝ «Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 1550-Լ որոշման հիման վրա, այդ որոշման հիմքով այդ բաժինները միավորվել են այլ ստորաբաժանումների հետ, ինչի արդյունքում որեւէ հաստիք չի կրճատվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՐԴԸ ՄԱՄՆԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ Է ՎՆԱՍԸ

ԴԱՀԿ աշխատակից, փաստացի ՀՀ արդարադատության նախկին նախարար Հ.Թ.-ի վարորդ հանդիսացող Ա.Հ.-ն մասնակի վերականգնել է պետությանը պատճառված վնասը. Հ.Թ.-ի նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չի հարուցվել: Այս մասին տեղեկացնում են Գլխավոր դատախազությունից:

«2023 թվականի մարտի 27-ի դատավճռով՝ Ա.Հ.-ն մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ 2011 թվականի ապրիլի 22-ից մինչեւ 2015 թվականի ապրիլի 22-ը օժանդակել է Արդարադատության նախարարության ԴԱՀԿ նախկին պետ Մ.Պ.-ի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով, վատնման եղանակով ուրիշի առանձնապես խոշոր չափերով գույքի՝ 5 մլն 712 հազար 550 դրամի հափշտակությանը (քրեական գործի (վարույթի) նախաքննության ընթացքում Ա.Հ.-ն վերականգնել է պատճառված վնասի մի մասը՝ 2 մլն 985 հազար դրամը):

2020 թվականի դեկտեմբերի 20-ին քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դատարանի՝ 2023 թվականի մարտի 27-ի դատավճռով՝ Ա.Հ.-ն մեղավոր է ճանաչվել Քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանք կատարելու համար (վատնման եղանակով առանձնապես խոշոր չափերով հափշտակության օժանդակություն), եւ նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ 4 տարով ազատազրկում: 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված «Էրեբունի-Երեւանի հիմնադրման 2800-ամյակի եւ Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ՝ Ա.Հ.-ն ազատվել է նշանակված պատժից: Նույն դատավճռով բավարարվել է նաեւ պատճառված վնասի չհատուցված մասի՝ 2 մլն 727 հազար 550 դրամի վնասը վերականգնելու վերաբերյալ դատախազի հայցը:

Հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի՝ դատավորի եւ դատական իշխանության հեղինակության ու անկախության նկատմամբ հարգանքի պահանջը՝ նշված քրեական վարույթի ընթացքում ապահովվել է գաղտնիությունը, ինչի պատճառով հանրությունը չի տեղեկացվել, որ քրեական վարույթը վերաբերել է նաեւ ՀՀ արդարադատության նախկին նախարար, ներկայում ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր Հ.Թ.-ին: Սակայն նկատի ունենալով, որ նշված վարույթով արդեն իսկ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ կայացվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերջնական որոշում (նրա նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդում չի իրականացվել, որի իրավաչափությունը հաստատվել է նաեւ Առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանների կողմից), տեղեկացնում ենք, որ նշված որոշմամբ հաստատված է համարվել, որ Հ.Թ.-ն, հանդիսանալով ՀՀ արդարադատության նախարար եւ 2013 թվականի հուլիսի 16-ից տեղեկացված լինելով Ա.Հ.-ին ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում գլխավոր հարկադիր կատարող Մ.Պ.-ի կողմից պաշտոնի նշանակելու, սակայն փաստացի իր վարորդի գործառութային պարտականությունները կատարելու մասին, Ա.Հ.-ին ավելի բարձր վարձատրելու, կոչում շնորհելու, աշխատանքային փորձ ձեռք բերելու հնարավորությունից չզրկելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, Ա.Հ.-ի կողմից պաշտոնից բխող պարտականությունները չկատարելը կանխելու կապակցությամբ միջոցներ չի ձեռնարկել: Ավելին, Հ.Թ-ն 2013 թվականի հուլիսի 13-ին ստորագրել է թիվ 158-Ա հրամանը, որով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման եւ համակարգի ավտոմատացման բաժնի առաջին կարգի խորհրդատու, նույն ծառայության օպերատիվ բաժնի առաջին կարգի մասնագետ Ա.Հ.-ին, որը փաստացի հանդիսացել է նախարարի վարորդը, հատկացվել է ծառայողական զենք»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՀԱՍՏԱՏՎԵՑ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Կառավարությունն իր երեկվա՝ ապրիլի 6-ի նիստում ընդունել է որոշում՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում նպաստի ձեւով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի զեղչ) եւ պետական կրթաթոշակ տալու կարգում՝ հեռավար ուսուցմամբ սովորող ուսանողներին ուսման վարձավճարի փոխհատուցում հատկացնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ ուսանողներին ուսման վարձի փոխհատուցում հատկացնելու ընթացքում հայտնաբերված խնդիրներով պայմանավորված:

Գործող կարգով՝ ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում է հատկացվում որոշակի խմբերին պատկանող ուսանողներին, որոնք սովորում են Հայաստանի Հանրապետությունում գործող, հավատարմագրում ունեցող եւ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստի ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ տեղեր ունեցող բուհերում առկա կամ հեռակա ուսուցման ձեւերով:

Փոփոխության արդյունքում կապահովվի հեռավար ուսուցմամբ սովորող ուսանողներին ուսման վարձի փոխհատուցում հատկացնելու համար օրենսդրական հիմք, ինչպես նաեւ առկա խնդիրների շտկումը:

Այն հնարավորություն կտա Լեռնային Ղարաբաղի եւ Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված եւ բնակվող ծագումով հայ օտարերկրյա քաղաքացիներին մրցութային կարգով, հաշվի առնելով բարձր գնահատականները, ստանալու նպաստ ուսման վարձի լրիվ փոխհատուցման միջոցով:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 6-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

-Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., միկրոշրջան թաղամաս, 114 շենք, 29 հասցեում գտնվող 72,98 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11600000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 25.04.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 25.05.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկություններ համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՄԵԿՆԱՐԿ

ԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրապետությունում ապրիլի 15-ից մեկնարկում է բուհերի ընդունելության քննությունների հայտագրման գործընթացը:

«Արմենպրես»-ի հետ զրույցում ՀՀ ԿԳՄՍ նախարարության գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրենի տեղակալ Կարո Նասիբյանը տեղեկացրեց, որ այն շրջանավարտները, որոնք ցանկանում են ուսումը շարունակել բուհերում, մինչեւ մայիսի 10-ը պետք է ներկայացնեն իրենց դիմում-հայտերը:

Նրանք, որոնք այս տարվա շրջանավարտներ են, դիմում են իրենց դպրոցի տնօրենին, իսկ նրանք, որոնք նախորդ տարիների շրջանավարտներ են, կարող են դիմել ԳԹԿ-ի առանձնացրած կրթական հաստատություններ անձնական ծածկագիր ստանալու համար:

«Ինչպես գիտեք, այս տարի շրջանավարտներին երկու անգամ քննություն հանձնելու հնարավորություն է տրվում: Հունվար-փետրվարին արդեն որոշ շրջանավարտներ հանձնել են իրենց քննությունը: Նրանք, որոնք արդեն հանձնել են իրենց քննությունները նախորդ ամիսներին, կարիք չունեն ԳԹԿ նոր անձնական համար ստանալու:

Նրանք օգտվում են իրենց հին անձնական համարից: Դեռ քննություն չհանձնած շրջանավարտները պետք է անպայման ունենան այդ անձնական համարը»,-ասաց Կարո Նասիբյանը: Արդեն քննություն հանձնած շրջանավարտները, եթե գոհ են իրենց գնահատականներից, ապա կարող են դրանք օգտագործել մրցույթի համար եւ կրկին քննություն չհանձնել: Եթե չեն բավարարել այդ գնահատականները, ապա կարող են հանձնել նոր քննություններ՝ներկայացնելով դիմում:

«Դիմում ներկայացնելիս դիմորդ շրջանավարտը նշում է բուհը, մասնագիտությունը, դրա համար պահանջվող քննությունները: Շրջանավարտները քննությունների իրենց գնահատականներով մասնակցում են մրցույթին: Ասեմ, որ մրցույթ անցկացվելու է երկու փուլով: Դիմորդն առաջին փուլից դուրս մնալու պարագայում կարող է մասնակցել նաեւ երկրորդ փուլին:

Առաջին փուլում նշվում է մեկ բուհ, մեկ մասնագիտություն: Առաջին փուլից դիմորդի դուրս մնալու դեպքում, երբ դիմորդը մասնակցում է մրցույթի երկրորդ փուլին, կարող է նշել 6 բուհ 6 մասնագիտություն, եթե, իհարկե, ունի տվյալ մասնագիտությունների համար դրական գնահատականներ»,-ասաց Կարո Նասիբյանը: Այս տարի կառավարության որոշմամբ ընդունելության կարգում կատարվել է փոփոխություն: Երկար ընդմիջումից հետո դիմորդ-շրջանավարտներին կրթության հիմքով տարկետման իրավունքի հնարավորություն է տրվում:

Տարկետման համար առանձնացվել են Երեւանի պետական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարաններն ու բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական մասնագիտությունները, որոնք պետության համար առաջնահերթություն ներկայացնող ճյուղեր են: Այս մասնագիտությունների գծով առանձնացվել են անվճար տեղեր, որտեղ ընդունված արական սեռի դիմորդները ստանում են տարկետում ծառայության զորակոչից: Դա գործելու է 4 տարի:

«Ինչպես գիտեք, ուսանողը սովորելու ընթացքում անվճար համակարգից կարող է անցնել վճարովի համակարգի: Ասեմ, որ անվճար ընդունված եւ տարկետում ստացած արական սեռի ներկայացուցիչը վճարովի համակարգ անցնելու դեպքում չի զրկվում տարկետման իրավունքից»,-հավելեց Կարո Նասիբյանը:

«ԱՄԵՐԻԱ» ԲԱՆԿ

ԿԱՅԱՑԱՎ Doing Digital ՖՈՐՈՒՄԸ

Երեւանում երեկ տեղի ունեցավ The Doing Digital ֆորումը: Ֆորումի հիմնադիր կազմակերպիչն էր Spring PR ընկերությունը, համակազմակերպիչներն են «Ամերիա» բանկը եւ Spring PR ընկերությունը:

Միջոցառումը կրում էր «Վերափոխելով թվային ապագան» խորագիրը:

Ֆորումի նպատակն էր համախմբել ոլորտի առաջատարներին՝ բացահայտելու թվային փոխակերպման եւ հաղորդակցվելու նորագույն միտումները:

Միջոցառմանը մասնակցում էին նաեւ ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը եւ Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը:

«Ամերիա» բանկի տաղանդների եւ ծառայությունների գծով տնօրեն Արմինե Ղազարյանը ֆորումի բացման ժամանակ իր ելույթում նշեց, որ «Ամերիա» բանկը՝ որպես Հայաստանի ֆինանսական ոլորտի թվային փոխակերպման առաջամարտիկ, վերջին 5-6 տարիներին ստեղծել է ֆինանսական եւ տեխնոլոգիական վստահելի միջավայր:

Doing digital ֆորումի հիմնադիր, Spring PR ընկերության համահիմնադիր Տաթեւիկ Սիմոնյանի խոսքով՝ ֆորումի նպատակն է համախմբել էկոհամակարգը եւ Հայաստանը ներկայացնել որպես ինովացիոն տեխնոլոգիաների եւ թվային տրանսֆորմացիայի հաբ:

Միջոցառման գլխավոր խոսնակ, Ֆինթեքի միջազգային փորձագետ, The Finanser խորհրդատվական ընկերության հիմնադիր Քրիս Սքիները, խոսելով Հայաստանում թվայնացման հեռանկարների մասին, ասում է՝ Հայաստանը կարող է դիրքավորվել որպես տարածաշրջանային թվայնացման ֆինանսական տեխնոլոգիաների կենտրոն:

«Ամերիա» բանկի ինովացիաների եւ թվայնացման գծով տնօրեն Արտյոմ Շամցյանն էլ իր խոսքում շեշտեց, որ «Ամերիա» բանկը թվային փոխակերպման ընթացքում այս ճանապարհով ընթանում է արդեն մի քանի տարի, իսկ ֆորումը հնարավորություն է ստեղծում, որպեսզի ներկայացնեն կուտակած փորձը, եւ թվային փոխակերպումը հասնելի դառնա Հայաստանում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՄԻՇՏ ԺՊՏՈՒՄ ԵՄ

«Ո՞Վ ԻՄԱՑԱՎ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻՍ ՄԱՍԻՆ». ԷՄՄԻ

Ամերիկաբնակ երգչուհի Էմմին «Ինստագրամ»-ում հուզիչ գրառում է կատարել: Երգչուհին վերհիշել է 2011 թվականը, որը նրա կյանքի ամենադաժան եւ տխուր շրջանն է եղել:

«Ժպտում էի: Հոգու դիակ էի՝ կոտրված, արժեքներս ու առաջնահերթություններս այլ էին: Հորս մահը եւ մորս չորրորդ աստիճանի քաղցկեղն ուսերիս ծանրացան եւս մի 10 հազար տոննայանոց բեռի հետ, որը մենակ տարա: Ո՞վ իմացավ արցունքներիս մասին, ո՞վ ինձ տխուր տեսավ: Այնքան քիչ բան էր պետք մարդուն մենակ չթողնելու համար, այնքան քիչ, սակայն բոլորը լուռ մնացին, եւ իրականությունը քչերը պատմեցին: Արդյոք վա՞խն էր նրանց հետ պահել, անտարբերությո՞ւնը, էգո՞ն զմը: Եվ ի՞նչ է փոխելու 12 տարով ուշացած խոստովանությունը: Ոչինչ: Ես ինքս էլ չեմ փոխվել: Միշտ ժպտում եմ: Ո՞վ գիտի արցունքներիս մասին, ո՞վ է ինձ տխուր տեսնում»: Հիշեցնենք, որ 2011 թվականին երկարատեւ հիվանդությունից հետո մահացել է երգչուհու հայրը՝ քանդակագործ Դավիթ Բեջանյանը: Նա հանրությանն առավել հայտնի էր որպես Օպերայի բակում տեղադրված Առնո Բաբաջանյանի արձանի հեղինակ: Իսկ, ահա, կարճ ժամանակ անց՝ 2018 թվականին, մահացավ նաեւ Էմմիի մայրը՝ երգչուհի, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Նադեժդա Սարգսյանը: Երգչուհի Էմմիի մայրը երկար տարիներ պայքարում էր քաղցկեղի դեմ: Նրան հաջողվում էր այդ պայքարում հաղթող դուրս գալ: Երգչուհին իր հարցազրույցներում նշում էր, որ բժշկի է դիմել Էմմիի եւ իր ընկերների կոչով ու հորդորով: Նադեժդա Սարգսյանը «Հայեր» համույթի եւ մշակութային կենտրոնի գեղարվեստական ղեկավարն էր, «Դո-ռե-մի» մրցույթի եւ վոկալ ստուդիայի հիմնադիրն ու գեղարվեստական ղեկավարը: 2003 թվականից ղեկավարում էր Երեւանի մշակույթի պետական քոլեջը: Նշենք, որ Էմմին ամուսնությունից հետո մշտական բնակություն է հաստատել Ամերիկայի Միացյալ Նահանգներում. նա ունի երկու զավակ՝ Դանիելն ու Մարտինը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿՓՈԽՎԵՆ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի՝ տարիներով ձգձգվող խնդիրը լուծում ստացավ. գործադիրն երեկվա նիստում թատրոնի դատուհանների փոխարինման համար հատկացրել է շուրջ 34 մլն դրամ: Այդ մասին «Ֆեյսբուք»-ում գրել է ՀՀ վարչապետի օգնական Նազելի Բաղդասարյանը:

«Գյումրու սրտում գտնվող կառույցի համար սա կենսական կարեւոր հարց էր, որը քննարկել էինք թատրոնի տնօրինության հետ դեռ նախորդ տարի: Կառավարությունը ականջալուր եղավ մեր բարձրացրած հարցին, եւ Շիրակի մարզպետարանի ու ՏԿԵՆ-ի հետեւողականության արդյունքում կարողացանք լուծում գտնել: Բոլոր շահագրգիռ անձանց ներգրավվածությունը չափազանց կարեւոր էր: Լիահույս եմ, որ առաջիկայում Հակոբ Հակոբյանի՝ ազգային արժեք ճանաչված «Սարերում» որմնանկարը, որը տեղադրված է թատրոնի ճեմասրահում, կտեղափոխվի այլ ապահով վայր: Այս հարցով եւս կա վարչապետի հանձնարարականը»,- նշված է գրառման մեջ:

ԼՈՒՐԵՐ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

«Կոնվերս բանկ»-ն հայտարարում է Visa Classic, Visa Gold, Visa Business եւ Visa Platinum վճարային քարտերի տրամադրման արշավ՝ արտոնյալ պայմաններով:

Մինչեւ 01.05.2023թ. բանկից ձեռք բերելով նշված Visa քարտատեսակներից որեւէ մեկը՝ քարտապանը կօգտվի միանգամից մի քանի նոր հնարավորությունից՝

- 50% սպասարկման տարեկան վճարի նվազեցված արժեք՝ քարտի գործողության ամբողջ ժամկետի համար,
- հաճախորդի ցանկությամբ, կախված հիմնական քարտի տեսակից, մեկ այլ անձի կտրվի կից Visa Classic, Visa Gold կամ Visa Platinum քարտ՝ առանց տրամադրման վճարի,
- Պրեմիում դասի քարտատեսակներ ձեռք բերելու դեպքում հաճախորդը կարող է ստանալ նաեւ մեկ հավելյալ քարտ՝ Visa PaySticker կամ Visa MiniFob՝ առանց տրամադրման վճարի:

Բացի արշավի ընձեռած հնարավորություններից՝

- քարտի գործողության ողջ ընթացքում թե՛ հիմնական, թե՛ կից քարտ ստացած հաճախորդները կմասնակցեն բանկի՝ Visa քարտապանների համար պարբերական արշավներին՝ ստանալով գումարի վերադարձ, ինչպես նաեւ արժեքավոր նվերներ,
- քարտի գործողության ողջ ընթացքում կօգտվեն Visa վճարահաշվարկային համակարգի հետաքրքիր եւ տարաբնույթ առաջարկներից:

Եվս մեկ առավելություն, որ նշեցին «Կոնվերս Բանկ»-ում, պրեմիում քարտապանների համար եզակի առաջարկն է. «Կոնվերս Բանկի պրեմիում քարտապանները մրցակցային մեծ առավելություն ունեն. վճարելով ընդամենը 100 դրամ մուտքի վճար՝ քարտապանը մինչեւ 14 տարեկան երկու երեխայի հետ կարող է անսահմանափակ օգտվել «Զվարթնոց» օդանավակայանի Lounge Key-ից»:

Մանրամասները՝ conversebank.am, 010-511-211:

Բանկը վերահսկվում է ԿԲ կողմից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻՑ ՀԵՌՈՒ

Սքարլեթ Յոհանսոնը փորձում է հեռու մնալ սոցիալական ցանցերից: Marvel-ի 38-ամյա աստղն ասել է, որ հրաժարվում է Instagram-ի նման հավելվածներից, քանի որ «չափազանց փխրուն մարդ է»:

«Չեմ կարող: Իմ էգոն չափազանց փխրուն է»,- ասել է նա The Skinny Confidential Him & Her փոդքաստի մի դրվագում: «Իմ ուղեղը չափազանց փխրուն է: Ես նման եմ նուրբ ծաղկի»:

Նրա խոսքերով՝ առանց սոցիալական ցանցերի էլ կյանքը «բավականին անհանգիստ է»: «Ես «Ինստագրամ»-ում ժամանակ եմ անցկացրել երեք օրը մեկ անգամ ու հասկացել, որ վատնել եմ 20 րոպե՝ նայելով ինչ-որ մեկի Instagram-ին»:

Դերասանուհին խոստովանել է, որ ունի հաշիվ մաշկի խնամքի իր ապրանքանիշի The Outset-ի համար, բայց վստահ չէ, որ «այն ճիշտ է օգտագործում»:

Այնուամենայնիվ, Յոհանսոնը խոստովանել է, որ թուլություն ունի TikTok-ի հանդեպ: Երկու երեխաների մայրը երբեմն սիրում է «սարսափելի տեսանյութեր» անել իր ապրանքանիշի համահիմնադիր Քեյթ Ֆոսթերի հետ հարթակի համար: «Մենք երկուսս էլ վատ ենք դրանում, բայց դա զվարճալի է», - կատակել է նա:

● Ապրիլի 8-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Վերջին ուսուցիչը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՎԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ուր դիմել, եթե վարկային պատմությունը սխալ է, կամ առկա է բողոք բյուրոյի հանդեպ:

Լիաննա Կոստանդյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լ. Կոստանյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե վարկառուի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման եւ ուղղման նպատակով վարկառուն, համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի դրույթների, կարող է այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող սուբյեկտներին (վարկային տեղեկատվության աղբյուրին):

Տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում վարկային բյուրոյին ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում «Իմ ԱՔՌԱ» անձնական գրասենյակից: ԱՔՌԱ-ի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման եւ վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է «Վեճերի լուծման ընթացակարգ»-ով:

ԱՔՌԱ վարկային բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկային պատմության ձեւավորման աղբյուրներն են ԱՔՌԱ անդամ կազմակերպությունները (բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, հետաձգված վճարումներով գործարքներ իրականացնող կազմակերպությունները, ինչպես նաեւ հանրային տվյալների բազաներից ՀՀ կառավարության սահմանած կարգով վարկային բյուրոյին անձանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրող պետական մարմինները), որոնք տրամադրում են վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ տեղեկություններ:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ աջակցող միջոցներ են տրամադրվում հաշմանդամություն եւ սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց:

Կորյուն Առաքելյան (72 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հաշմանդամություն եւ սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց տրամադրվում են պրոթեզներ (վերին եւ ստորին վերջույթի), կրծքագեղձի էկզոպրոթեզ, ականագնդի պրոթեզ, ձայնաստեղծ սարքեր/պրոթեզներ, օրթեզներ, անվասայլակներ, գուլպաներ (անդամահատված ծայրատի համար), լսողական սարքեր, լսողական սարքերի անհատական ներդիրներ, աղեկապեր, սեղմիրաններ, հենակներ, ձեռնափայտեր, քայլակներ, ծնկակալներ, ռեկլինատորներ, կոշիկներ (օրթոպեդիկ, պրոթեզի, օրթեզի):

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գնահատված կարիքների համաձայն՝ խնամքի ծառայությունները տրամադրվում են ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (ՀՀ օրեսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սան Դիեգոյի շրջանային վերահսկիչ խորհուրդն ապրիլի 4-ին միաձայն ընդունել է հռչակագիր՝2023 թ.-ի ապրիլի 24-ը հայտարարելով Հայոց ցեղասպանության հիշատակի օր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 + 4 + 8 + 13
Կոտայքի լեռներ	0 + 3 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8 +13 +15
Գեղարքունիք	0 + 3 + 7 + 10
Լոռի	+ 1 + 5 +12 + 15
Տավուշ	+ 5 + 9 +13 + 16
Արագածոտնի լեռներ	0 + 3 + 8 + 10
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 +13 + 16

Արարատ	+ 8 + 10 +18 + 20
Արմավիր	0 + 2 + 9 + 11
Վայոց ձորի լեռներ	+ 7 + 9 + 18 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 13 +18 + 21
Սյունիքի հովիտներ	+ 8 + 9 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 +18 + 21
Արցախ	+ 8 + 11 + 15 + 19
Երեւան	+ 7 + 9 + 17+ 19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Դավթաշենի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*